ՎԱՀՐԱՄ ՓԱՓԱԶՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ԵՆՈՎՔ ԱՐՄԵՆԻՆ

Անվանի դերասան, արվեստագետ, գրող Վահրամ Փափազյանը նամակներ է գրել գրող, բանաստեղծ, խմբագիր Ենովք Արմենին։ Նամակները պարունակում են ուշագրավ դրվագներ Վ. Փափազյանի բեմական գործի, «Հետագարձ հայացք» գրքի տպագրության, իր ճանապարհորդությունների և այլ եղելությունների վերաբերյալ։ Դրանք ուշագրավ կողմերից են բացահայտում երկու հայրենանվեր մտավորականների գործունեությունը։ Ներկայացվող նամակները պահվում են Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում (Ենովք Արմենի ֆ., № 1069)։

Վ. Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

№ 1

23 հոկտեմբերի, 1910
ԵՓՊԱՅԻ

Իմ թանկագին Արմեն ջան

Հուսամ մի քանի օրեն Պոլիս կլինեմ, և առաջին գործս կըլլա մեծ և վերջին նպաստիս ձեռնարկել։ Հուսամ դու ևս պատրաստած կլինես դեռատի սքեմավորիդ պատկերը...։

Քեզ մի մեծ ուրախություն պատճառելս գիտնալով, կիմացնեմ, որ մեծ պահքի 1-են սկսյալ ամբողջ մի տարվան համար պայմանագրություն ստորագրեցի Հռովմի իտալական մնայուն խմբին հետ (նամակագրությամբ)։ Կտեսնես, որ այդ նպաստը շատ տեսակետով ինձ անհրաժեշտ է, որուն հաջողությունը պիտի ապահովե սիրահար վարդապետդ, ուստի չեմ կարծեր, որ զիս հուսախաբ թողուս։

Համբույրներս կապույտ աչուկներուդ։

Վահրամ Փափազյան

№ 2

<Անթվակիր>
Պոլիս

Ենովքս

Մոտ օրեն նոր խմբով պիտի ելլեմ բեմ։ Խնդրեմ Ս. Համիտը անունով մենախոսություն մը սկսե։

Պիտի արտասանեմ։ Ճիշտ իր պատկերեն ուսումնասիրելով իմ դիմագծությունը, այնպես որ կենդանի, իր ճիշտ բեղիքով ելլե բեմ։

Վահրամ

№ 3

<Անթվակիր>

Ծիրելիս

Անհրաժեշտ է, որ դու, ի՞նչ ձևով և ինչ կերպով էլ որ լինի Մաքրիգյուղի մեջ ինձ մի ներկայացում սարքելու մասին աշխատես։ Լինի դա ի նպաստ և թե գործի կամ պարզապես ինձ համար միևնույնն է, ուրիշ ճար և ճանապարհ

չիկա։ Վաղը կանցնեմ քեզ մոտ, իսկ մինչ այն այսօր իսկ տես խոսե, ղիմե, խնդրում եմ։

Քո Վահրամ

№ 4

<Անթվակիր>

Իմ ազնիվ բարեկամ

Ահա նամակիս հետ կուղարկեմ ամենալավ օթյակի տոմս մը, ինչպես որ խոստացա։

Կրկին և կրկին կխնդրեմ, որ Ձեր օր<իորդ>քրոջ հետ (թեև ղինքը ճանաչելու պատիվը չունիմ), ներկա ըլլաք երեքշաբթի գիշեր։ Ներկայացումեն մի օր առաջ, Ձեր պատվական թերթին մեջ իմ «Օթելլո»-ի լուսանկարը, մինչև հիմա իմ մասին գրված հոդվածներուն հետ, տպավորիչ մեկ ամփոփումովը միասին տեսնել իմ ամենամեծ փափագս է, որուն գոհացումը պիտի տա անշուշտ ինձ բարեկամ գանգրահեր Արմենը։

Տպագրության ծախքը ես կհանձնեմ խմբագրության։

Ձեզ սիրող ու բարեկամ Վահրամ

Հ. Գ.

Ներողամիտ աչքով նայել եք իմ տառասխալներուս։ Եթե կա բան մը, որ պիտի չի սպասեմ երբեք՝ այն ալ ուղղագրությունը։

Նույնը

№ 5

14.....1912

Պոլիս

Սիրելի Արմենս

Երեկ քարտդ առի. գիրքդ ինձ հետ կբերեմ, որովհետև սիրելիս, խմբովս Ատապազար կուգամ անմիջապես, որ պատասխանդ առնեմ։

Ուստի գրե շուտով. կրնա՞ք թատրոնը տրամադրությանս տակ դնել մեկ շաբաթի համար։ Եթե այո, եկող շաբաթ կուգամ և 4 ներկայացում կուտամ։ Իսկ այս ձեռնարկիս հաջող ելքը քեզմե կսպասեմ։

Պայմանները պարզ են, մեր շահեն բաժին հանել կրնանք թատրոնին, որ է ըսել հարյուրորդով։ Ձենք կրուեր [!]։

Համբույրներս քեզի

Վահրամ Փափազյան

V. Papazian
87 Rue Konstantino-88
Fery-Kovy

№ 6

7, 1912

Իզմիր

Արմեն ջան

Մի քանի օրեն Իզմիրեն կմեկնինք (երեքշաբթի գուցե) դեպի քաղաքդ։

Սույն հայտարարությունները ստացածիդ պես քաղաքին մեջ գլխավոր տուները և մեծ ու փոքր սրճարանները և թատրոնի դուռը ու եկեղեցին ձգիլ տուր։

Մեր հայտարարության ցույց տված խաղացանկը արդեն բավական պերճախոս պատասխան է հանդեպ այն կասկածներուն, որոնք գուցե ունենան քանի մը հոռետեսներ խումբի բարոյական կշռի վերաբերմամբ։

Իմ սիրուն ու (խըվըսամազ) բարեկամս հուսամ լավ օրեր կապրենք դարձյալ։

Վահրամ

№ 7

4.....1912
Կ. Պոլիս

Իմս Արմեն

Երեկ ստացա նամակդ և այսօր կպատասխանեմ։

Խնդիրը որու մասին կխոսես նամակիդ մեջ, կարգադրված է արդեն։ Առանց այդ կարգադրության ես այստեղ չէի երևար արդեն։

Ուրախ եմ հոգածության համար, մանավանդ որ առիթ կուտաս ինձ սա եղանակին կրկին այցելել քաղաքդ։

Իմ հաշվիս չեմ կարող գալ, բայց կրնամ պայմանավորվել քու միջոցավդ հինգ [3 անընթ.] համար և լավ խմբով։

Ուստի եթե յուրաքանչյուր ներկայացման համար այդ պարոնները կըրնան տալ մեզ վերջնական գին՝ 12 ոսկի և բացի այդ մեր ճանապարհածախսերը (որ է բսել ընդամենը 7-ը), ուստի կարող եմ գալ, և եթե նաև թողուն դիս մեկ ներկայացում ալ իրենց համար ձրի տալ (այսինքն 6 % [՞] մը)։

Առանց այս պայմաններուն իմ քաղաքդ գալս անհնարին կթվի ինձ, գեթ առայժմ։—

՝ Սպասելով հեռագրավ պատասխանիդ իմ հասցեիս, որ է

Vahram Papazian
38 Rue Pechgurvji 38
Forlo-Bachl Pera

Կհամբուրեմ քեզ Համլեթի շրթունքով ու կգրկեմ Օթելլոյի բազուկներովը։

Վահրամ Փափազյան

№ 8

1 սեպտեմբերի, 1956
Երևան

Իմ շատ ցանկալի բարեկամս Ենովք—Արմեն

Նամակդ ապշեցրեց ու մխիթարեց ինձ, ահա թե ինչի չէի սպասում։

Բազում տարիներից հետո լսել սիրելի արձագանք այնքան հեռավոր և այնքան անմոռաց մի ոսկի անցյալին։

Ճիշտ է, ենթադրում եմ նույնպես, որևէ մանրամասն հասցե անհրաժեշտ չէ տողերդ հասցնելու համար ինձ, բայց նախընտրելի է, որ քո նամակներդ ուղղես իմ մշտական հասցեին, որի ներքո որովհետև թեև տարվա մեծ մասը լինում եմ Երևանում, բայց թղթակցությունս ստանում եմ Լենինգրադի իմ տան հասցեով և որտեղից անմիջապես ինձ կվերուղղեն այդ նամակները, ուր էլ որ լինեմ այս ընդարձակ երկրում։

Սիրելի Ենովքս, քիչ անց կլինեմ Պուքրեշ և Սոֆիա, գուցե քիչ անց ևս Ֆրանսիա, ուր բացի այլ գործերից կայցելեմ և Մարսեյլ՝ հանդիպելու համար քույրերիս հետ։

Օգտվելով առիթից, խնդրում եմ քեզ տեսնել կրտսեր քրոջս Էլիզային, որին ենթադրում եմ, որ հիշում ես Պոլսից, ինչ որ մի ժառանգական խնդիր կա, որի լուծումը բարեհաջող կարող է լինի Ֆրանսիայի մեր դեսպանության կից իրավական օրգանների միջամտությամբ և որին ես անպայման ընթացք կտամ, երբ իրազեկ կլինեմ իրերի դրության, Մարսեյլ հասնելիս։ Բացատրիր այս բոլորը Էլիզային, որին գրել եմ նույնպես և հորդորիր նրան համբերությամբ սպասել իմ ժամանման։

Սիրելի վաղեմի բարեկամս, շատ ես գրել իմ մասին հեռու անցյալում, երբ ապագայի մի խոստում էր դեռևս քո այնքան սիրած Վահրամը և որպեսզի հիմա էլ գրես քո գրախոսականը, կուղարկեմ քեզ մի հատոր իմ գրքից։

Առ այս վերջացնում եմ նամակս և սեղմում քեզ կրծքիս վրա անանց կարոտով։

Քո Վահրամ

Իմ մշտական հասցեն՝
Leningrad
chestala Sovetskala
5/6 Vaqram Kamerovitch
Papazian
teleqhone - Nekrassova 4 - 58 - 37
Քրոջս հասցեն Մարսելում
III me Veuve Elisa Kalfalyan
15 Impasse de Bedarieux
Rue St geau du Desert
St Pierre Marseille

№ 9

Լենինգրադի հասցեն

26 հունվարի, 1957

Leningrad 6ème Sovietique 5/6
Vahram K. Papazian

Աղվոր ենովք—Արմենս

Գրքիս երկրորդ հատորի հրատարակման գործերով մի քիչ ավելի երկար մնացի Երևանում, քան կարծում էի։

Մի երկու շաբաթից կլինեմ Լենինգրադ իմ տանը, ուր ենթադրում եմ նամակդ սպասում է ինձ։

Իսկ այժմ խնդրում եմ մի անգամ ևս հոդս քաշել տեսնել քույրերիս և նրանցից վերցնել մամայիս լուսանկարը և նրա հաջող reproduction-ը *առանց հապաղման ուղարկել ինձ Երևան։*

Հարցը նրանումն է, Արմենս, որ հրատարակչությունը, ինչպես նաև ընթերցողները, ուզում են տեսնել մորս նկարը գոնե երկրորդ հատորում։ Իսկ դժբախտաբար այդ նկարը ինձ մոտ չկա։

Ներիր քեզ պատճառած նեղությանս համար, և եթե իմ կարգին գտնում ես, որ կարող եմ «գտակար լինել քեզ, հայտնիր ինձ, և հաճույքով կկատարեմ։

Մամայիս նկարը քո նամակի հետ ուղարկիր Երևան իմ հասցեին, Եթե այդ շուտ եղավ, ապա ինքս կհանձնեմ հրատարակչության, որովհետև ենթադրում եմ, որ երկու երեք շաբաթ ևս կլինեմ Երևան, իսկ եթե ոչ, իմ բացակայության <դեպքում>՝ նկարը կհանձնվի հրատարակչության, իսկ նամակդ կուղարկվի ինձ Լենինգրադ։

Եթե գրախոսական ունիս, կամ Պոլիս հրատարակվող ժամանակվա օրինակներ իմ գրքից, ծալված մասերով ղրկիր նույնպես։

Միշտ կարոտով, միշտ քեզ սիրող
Վահրամ

Երևանի հասցեն. Rue de Kiev 8
Logement 37 Erevan U. R. S. S.

№ 10

25 ապրիլի, 1957

Հասցեն

Leningrad. Chestala Sovetskaia 5/6 Vagram Kamer. Paqazian U. R. S. S.

Անուշիկ բարեկամս ենովք.

Ուշացած եմ պատասխանում քո նամակին, ճամբորդության մեջ էի։

Չգիտեմ քեզ ինչպես շնորհակալ լինեմ մորս լուսանկարին համար։ Եվ կարծեմ մի ամիս չի անցնի, կուղարկեմ քեզ երկրորդ հատորը ևս, որի մեջ,

ի թիվս այլ լուսանկարների, կլինի նաև մամայիս նկարը շնորհիվ քո շանքերին։

Ի՞նչ անեմ, աղվոր Ենովքս, եթե ժամանակների և կյանքիս պարագաների բերմամբ խեղճ մայրս չկարողացավ ծերանալ իմ հարսի տակ, գոնե կմնա նրա և հորս հիշատակը իմ տողերում, դարձյալ քո շնորհիվ, իմ անուշիկ բարեկամս։

Զմոռանաս, որ միշտ սպասում եմ քո գրախոսականին։ Գուցե ես այդ կգտնեմ Լենինգրադ, իմ տանը, ուր կլինեմ շուտով և այդ հույսով էլ մխիթարվում եմ։

Իսկ հիմա մի խնդիր ևս ունիմ քեզ, որի իրականացումը հնարավորություն կտա ինձ մի անգամ ևս «խրվրս» մազերդ շոյել և կապույտ աչքերիդ նայել, ինչպես և լսել քո մեղմ և փափուկ ձայնը, որը ականջումս է դեռևս, չնայած տարիների հոլովումին։

Ահա խնդիրքս, մեծ դերասան լինելը լավ բան է, հեղինակ դառնալը ավելի քան լավ, բայց տարիները անցնում են Ենովք, և անզուսպ ցանկություն ունեմ տեսնել քույրերիս և քեզ։ Այդ հիմա հնարավոր է, ինչպես տեղեկացրին ինձ այստեղ։ Այդ հույսը իրականություն դարձնելու համար անհրաժեշտ է Ֆրանսա ապրող իմ հարազատներից, այս դեպքում քույրերիցս էլիզից կամ Սերբուհիից։

Papier d'hebergement մը 2 exemplaire-ով, որոնք պետք է legaliser ընել հետևյալ տեղերից՝

1. lamairie
2. par la Prefecture
3. ministere des affcure Etranger
4. juge de Palx, և եթե կարիք լինի ե՛ notaire-ից։

Եվ այս թղթերը ուղարկել ինձ Լենինգրադ իմ մշտական հասցեին։

Քույրերս կարող են դժվարությամբ հասկանալ այս բոլորը, բայց քեզանից խնդրում եմ, որ կանչես նրանց քեզ մոտ, բացատրես և ընթացք տաս։ Նույնպես մասնավոր կերպով խնդրում եմ քեզ, սիրելի Ենովքս, բացատրել երկուսին էլ, որ ոչ մի պայմանով նրանց վրա ծանրություն չեմ լինի և չեմ կարող լինել, այլ ընդհակառակը այս միջոցով կարող եմ տեղվույն վրան նյութական անհրաժեշտ օգնություն ցույց տալ երկուսին էլ։ Եվ եթե ցանկություն ունին ինձ հետ բերել մեզ մոտ հյուր 3 ամիսով, ուր փառք աստծո, ոչ մի բանի պակասը չեմ զգացել և քառասուն տարուց է ապրում եմ ավելի ապահով, քան երբևիցե որևէ տեղում։ Եթե հնարավոր լիներ առանց այս ձևակերպությունների այցելել Մարսեյլ և այցելել միմիայն նրանց տեսնելու և նրանց օգտակար լինելու համար, այսպիսի նեղություն ոչ քեզ կպատճառեի, ոչ էլ նրանց։

Այդ թղթերով ես իրավունք կստանամ 3 ամսով մնալ Մարսեյլ և այդ ժամանակամիջոցին ոչ միայն կկատարեմ իմ ուշացած պարտականությունը որպես եղբայր, այլև ավելին։

Ահա աղվոր Ենովքս, ըրե այս բանը և թող մտածենք, որ ինձ վիճակված է եղել սիրտս թեթևացնել, տեսնելով ձեզ բոլորիդ և հանգիստ գնալ այս աշխարհից, ուր բազում երջանկության հետ անհատակ կարոտի ցավ եմ զգացել։

Քո Վահրամ

Հ. Գ.

Նամակդ վերջացնելուց անմիջապես հետո ստացա իմ նախկին դպրոցական ընկեր Դերենիկ Ճիզմեճյանից, որ Մուրադ-Ռաֆայելյան լիցեն ավարտելուց ի վեր ապրում է Իտալիայում և իր ազատ ժամերին գրականությամբ զբաղվում—մի նամակ, որից տեղեկացա, թե արտասահմանի մի շարք հայ պարբերականներ և հանդեսներ տպագրում են պրակներ և հատվածներ իմ գրքից։

Եթե, ինչպես գրել էիր ինձ քո առաջին նամակով, հեղինակային իրավունք ասված բանը գոյություն չունի լեպլեպիճիների աշխարհում; ապա սիրում եմ հավատալ, որ այլ երկրներում հրատարակված հայ թերթերի վարչություններ չեն կարող օրինակ վերցնել այսօրվան Ստամբուլի գրական բարքերից։ Այդ հեղինակային իրավունքը այստեղից ստանալու practique միջոցը չեմ տեսնում։ Բայց կուզենայի առաջարկել քեզ ինքդ ստանալ իմ անունից, որի համար պետք եղած պաշտոնական հավատարմաթուղթ կուղարկեմ քեզ, եթե պետք է և այդ գումարից օգտվիր ինքդ, իմ խաթեր և ի հիշատակ ինձ, մի մասն էլ տուր քույրերիս՝ ինչպես հարմար կգտնես։ Այդ գոնե որոշ չափով կթեթևացներ նրանց նյութական դժվարությունը մինչև իմ գալը, որից հետո, հավատացած եմ, հիմնովին կփոխեմ նրանց վիճակը։

Ուրեմն եթե համաձայն ես, գրիր նամակիդ մի ծայրին, և ես քեզ կուղարկեմ հաջորդ նամակով ինչ որ անհրաժեշտ է։

Սուտաթդ սիրեմ աղվոր Ենովքս, քանի նամակներդ կկարդամ խուտուր-միշ կըլլամ։ Մեյմը ձեռքս իյնայիր տե, քեզի սիրելեն բզիկ-բզիկ ընեի։

Դարձյալ քո՝ Վահրամ

№ 11

27 օգոստոսի, 1957։

Խրվրս մազերով, կապույտ աչքերով իմ բոլոր ժամանակների բարեկամդ, Ենովքս

Այսօր մոտ երկու ամիս է, որ մի շարք ճամփորդություններից հետո վերջապես մտա Լենինգրադ իմ ամառանոցը, որտեղ գտա և քո նամակը, որ ինձ սպասում էր։

Ջոլուխ, չոճուխ, տուն, տեղ, հինգի, խազ, եորտեկ, երկու գայլի ձագ, ոզնի մը և չորս պահապան շներ, այցելել, փայփայել, կերակրել, սիրել ու սիրվտելուց հետո, իջա Երևան այսօր «դանավով, նամակդ բերելով կուրծքիս վրան չորսից-հինգ հազար մետր բարձրություններու վրայեն մինչև տունս Երևան, որպեսզի խելքս գլուխս քեզի պատասխան մը տամ։

Երևան եկա արագ կերպով, որովհետև հնդկահայության հրավերով և մեր հանրապետական կառավարության ցանկությամբ պատրաստվում եմ մեկնել Կալկաթա և մի քանի այլ քաղաքներ կարճ ժամանակով։

Գրքիս երկրորդ հատորը շարվում է և շատ հավանական է, որ մեկնելուց առաջ ինքս իմ ձեռքով քեզ ուղարկեմ մի օրինակ կամ հանձնարարեմ հոգատար մի ձեռքի հասցեագրել քեզ, եթե մինչև մեկնած օրս գիրքը լույս տեսած կլինի։

Նախ՝ անսահման երախտիք ու շնորհակալություն քեզ, ներհուն, խորիմաստ և աղվոր գրախոսականիդ համար, որը մեզ մոտ շատ գրիչ շարժողների համար անակնկալ նորություն մը եղավ։

Ինձ մագիստրոս ես անվանում անուշիկ բարեկամս, գուցե և իրավունք ունիս, բայց տարիները ինչ էլ որ անեն ինձ հետ, քեզ համար միշտ եղել եմ, կլինեմ և լինելու եմ նույն չար և միամիտ աղվոր չոճուխը, որին սիրեցիր հիսուն տարի առաջ, որի անփորձ քայլերի առաջ պատվանդան դարձրիր հմուտ գրիչդ, երբ ապագայի լոկ խոստում մըն էի ես միայն, մի քիթ ունեի և երկու աչքեր։

Եթե բախտը ժպտա և հաջողվի քեզ գալ ինձ մոտ, իմ տունը այս մեր հյուրասեր երկրում, կամ ինձ համար հնարավորություն ստեղծվի մի անգամ ևս պատկառելի մագիստրոսի քղանցքներս հավաքել, ծովեր ու լեռներ կտրել և գալ քեզ մոտ, կտեսնես աղվոր Ենովքս, որ հակառակ տարիներին նույնն եմ մնացել միշտ, որովհետև ինչպես գիտես տարիների թվով չի հաշվվում մարդկային տարիքը, այլ զգացումների քանակով ու որակով։ Եվ շնորհիվ իմ բնածին օպտիմիզմի, զգացումներն ու տարիները անցել են իմ վրայից ինչպես ջուրը կարապի վրայից՝ առանց թրջելու իմ փետուրները.... և դեռ չեմ ուզում վերջին երգը երգելու պահանջը։

Իսկ գալով «աղնվազարմ» քույրիկներիս, խնդրում եմ, որ մի վերջին անգամ ես քեզ մոտ կանչես այդ սիրելի խալդախները և ասես. «գա, ուղուբսուղներ», եթե հնարավորություն ըլլար որևէ գումար ուղարկել այդտեղ, ես այդ վաղուց արած կլինեի, որովհետև փառք աստծու ունիմ թե՛ ցանկություն և թե՛ միջոցներ։ Կյանքումս երբեք նրանց միջոցներով չեմ օգտված, չեմ էլ մտածում օգտվել։ Այդտեղ գալու իմ ցանկությունս ո՛չ Կանբպիեռը տեսնելու, ո՛չ էլ միտիա ուտելու համար էր, այլ իմ հարազատ քույրիկներիս տեսնելու և նրանց ավուճը մի քիչ դրամ դնելու համար։

Որ տաղանդավոր ու հանրածանոթ գրականագետ Ենովք-Արմենը իմ փաստաբանս լինելուց առաջ իմ բարեկամս է, գուցե և միակ հարազատը, ավելի հարազատ քան արյունակիցը։ Եվ որ եթե հանըմ քույրերս Մարսեյլում այդպիսի փաստաբան գտնելով իրենց փիրուշան եղբոր համար զարմացած են, ապա ես ավելի քան արմնցած եմ անոնց անտեղի զարմացումով։

Սրանից հետո համոզիր նրանց, որ եթե ցանկություն ունին օլուխ-շոճուխով ինձ մոտ գալու, իմ գոսը միշտ բաց է։

Հնդկաստանում ներկայացումները վերջացնելուց հետո անպայման կաշխատեմ այցելել և Ֆրանսիա, իսկ դրա համար անհրաժեշտ Papier T'hehergement ուղարկողներ շատ կգտնվին։

Ցանկությունդ երկրորդ հատորի վերջավորության մասին, դժբախտաբար ուշ է իրագործելու համար, բայց հույս ունիմ, որ երկրորդ հրատարակության նկատի կառնվի քո այդ խելացի թելադրանքը պետհրատի ընդ. խմբագրության կողմից, որոնց կարդացի քո նամակը։

Անսահման շնորհակալություններս մամայիս նկարին համար, որը, ինչպես երեկ տեսա տպարանում, վարպետ ռեթուշից անցնելուց հետո աղվոր հանըմ մը դարձեր է և գրքիս ամենաաղվոր տեղը պիտի բաղմի։

Այս օրերիս գուցե անցնեմ էջմիածին և տեսնեմ Վեհափառին։

Ինչ վերաբերվում է իմ պատվեգինի հարցին, ուշադրությամբ կարդալուց հետո քո տեղերը [!], մի անգամ ևս խնդրում եմ քեզ, որ փորձես գոնե մի բան կորզես նրանցից, միշտ հոգուտ քույրերիս իհարկե։ Եվ կրկնում եմ, եթե դրա համար անհրաժեշտ է վկայագիր, քեզ կուղարկեմ։

Սիրելի Ենովքս, մտատանջված ես, որ Մարսեյլ գալով կփորձվիմ և խաղալ։ Չէ՛ աղվորս, ոչ գո՛ւ մտածիր այդ, ո՛չ էլ քույրիկներս թող մտածեն։ Արվեստը նախանձոտ սիրուհի մըն է, որի հանդեպ հարգանքի պակասը աններելի մեղք մըն է և ալ գիտե այդ ճշմարտությունը ավելի քան արվեստի ասպետ ծառան, ինչպիսին եղել եմ և հույս ունիմ կմնամ միշտ։

Եվ հիմա, սիրելի Ենովքս, նամակս վերջացնելիս աչքերիս առաջ տեսնում եմ քեզ, ինչպես տարիներ առաջ Պոլսում անբասիր ու բարի հայացքդ, հանդարտ ժպիտդ, փոքրիկ, ոլորուն ոսկեթել պեխերդ... միշտ խոհեմ, միշտ բարի, միշտ հանդարտ, քո մոխրագույն ու կոկիկ պոնժուրիդ մեջ, ոգևորության խոսքը միշտ շրթներիդ... և այնքան հստակ եմ տեսնում և ձայնդ լսում այնքան պարզ, որ գրկում եմ քեզ երկար, և ուժեղ և անվերջ։

Քո՝ Վահրամ

Հ. Գ. Նամակներդ միշտ ուղղիր Լենինգրադի հասցեին, որտեղից ինձ ուղարկում են, ուր էլ որ լինեմ։

Նույն

17 օգոստոս, 1960
Լենինգրադ

№ 12

Կյուզելիմ Ենովքս

Նման հորջորջումը քեզ թող չզարմացնե։ Իզուր չէ ասված որ «on reviens toujour aux enciens amours»*. Եվ երևի այդ հին ճշմարտությունն է պատճառը, որ քեզ հետ խոսելիս այս թեև օտար, բայց միշտ հին և միշտ նոր ածական-

* Միշտ վերադարձվում է անցյալ սերը։

ները կգործածեմ կորսված հիշողություն մը ապրելու համար։

Ճանըմ, նամակ պիտի գրես նե, ինչո՞ւ համար վեղարավոր <...> մարդկանց կհանձնես, մանավանդ երբ փոստ հեռագիր և այլն ըսված հիմնարկություն մը կա աշխարհում։ Երևի կաթողիկոսը սպասում է, որ անձամբ ինձ հանձնե նամակդ։ Երևան վերադարձիս՝ մեղքերի թողության համար այցելության պիտի երթամ իրեն և եթե նամակդ պահեր է, ուրեմն կկարդամ։

«Սրտիս պարտքը» քեզի կուղարկեմ Երևանից։

Նախազգացումդ ճիշտ է աղվոր Ենովքս, այս վերջի ամիսները ես ինքս էլ հաճախ ինձ փնտրել եմ և չեմ գտել։ Ահա մի ամիս ու կես է Լենինգրադի շրջակայքում իմ ամառանոցս եմ և փառք ստեղծողին, հավերուս, խորոզներուս, շուներուս և գրքերիս մտերմության մեջ ինքզինքս գտա։

Անցյալ տարի Բուլկարիա էի և Ռումինիա։ Ցմեռը գուցե ամիս մը Քարլըսպատ ըլլամ, քիչ մը ինքզինքս թամիր ընելու համար, իսկ եթե պայմանները բարեհաճեն գուցե և ինձ հաջողվի ըստախոզի սալաթայի ստրըտյաներու, խալխան թավսիներու և աճալ աճայիպ քույրերուս արալըխը մեկ երկու օր տեսնեմ քեզ Մարսիլիայի Քանըպիեսի պուճախներուն մեկին մեջ։

Սա «Քուլիսը» մեկ երկու հատ ինձի ղրկիս. նե շատ հարգի կանցնի. ամբողջ կյանքս քուլիսներուն մեջ անցնելե հետո, չէի սպասեր, որ այս մեղավոր աշխարհին մեջ ուրիշ քուլիս ալ կա։ Եվ եթե հարմար կգտնես, ատոնց տված կսմիթներուն ճուղապդ ինձի հայտնե։ Գիտես. յա՜, փե՛ք կսիրեմ ինձի կտրկ կընին նե, գիտես նույնպես, որ նման կսմիթներու շատ ալըշմիշ եղած եմ։

Կյուղելիմ Ենովքս, ինչքան երջանիկ կլինեի, եթե հիմա դիմացս նըստած ըլլայիր վիլլայիս սալոնին լայն փենճերեին, որի մեկ քինարը նստած՝ թելադրում եմ քեզ համար այս տողերը, դիտեիր պարտեզիս ծաղիկները. փըթըրախի պես ծառին ճյուղերը կոտրող խնձորները, շեշպելետ սուտաթլը խոսխոճա պուլտոքըս (շունս), որ ոտքերիս տակ նստած է։ Մինչև ղիշերվա երկուսը չմթնող երկինքը և աճալ աճայիպ խուշերու անքաղաքավարի խոսվրտուքը ծառերուն թեփեն։ Այդ արալըխ, փելթեի պես պեսլեմեն իր հյուսիսային հրապույրները փաթլամիշ ըլլալու չափ սեղմած ճերմակ փոռոթիլայի մեջ արծաթ թեփսիին վրա մեյ մեկ ֆինճան խահվե կբերեր. որի գաղջ գոլորշիի մեջեն քեզի հետ կհիշեինք ու կապրեինք մեր ջահել ճիվան օրերը։

Անուշիկ բարեկամս, ի՞նչ կըլլա սա քիչ մը տեղեդ երերա տե միջոցը գտիր և ինձի տավեթնամե մը ղրկե պաշտոնական ձևով, որպեսզի կարենամ գոնե մի անգամ ես խըվըս մազերդ, մավի աչքերդ ու բարեձև հասակդ տեսնել։ Որովհետև աղվորս, այդ տեսակ ազդու թուղթ մը միայն հնարավոր կդարձնե նման ցանկություն մը։ Մանավանդ եթե ալդ հրավերը եղած լինի Մարսեյլի. հայ համայնքի կամ նույն համայնքի որևէ կուլտուրական ձեռնարկի կողմե։ Ջենե անանդ միս մինակ առանց լուրջ սեպեպի դռնեն դուրս ելլել և սոխախները պըտըտիլը անհարմար կնկատվի։

Քույրերուս եթե տեսնիս, բարևիր։

Կյանքը հավիտենական չէ յավրում, եկեր էնք, որ երթանք և պետք է երթանք, որ նորեն գանք. այս aller-retour ճամփորդությունը գուցե թոաֆ կնես, բայց ատիկա իմ համոզումս է։ Լավ մտածե և կտեսնիս, որ այդ տեսակ մտածումը հեչ բան մը չըլլա նե, գոնե մխիթարանք մընե։

Աղվոր յավրում, որովհետև քիչ մը վերջը Երևան պիտի ըլլամ, նամակներդ Երևանի իմ հասցեին ղրկե։ Բայց չմոռանաս և ականջի ետև չթողես սա իլմու հապերը ղրկելու մասին։ Գիտեմ ատիկա թե ժամանակդ կզրավե և թե ուշադրությունդ, բայց ինչ արած անուշիկ եղբայրս խաթերս համար ըրե ատիկա և ընդունիր քո ամենասիրելի, ամենամոտ բարեկամիդ Վահրամին ասխըտար հեռուներեն ջուվալ մը համբույրը, որից ինձ հիշողներուն բաժին հանե մեկ երկու հավուճ։

Քո Վահրամ

Հ. Գ.

Լենինգրադի հասցեն հետևյալն է. Leningrad Lahta Vakzalnaia 7

իսկ Երևանինը, ուր պետք է ուղղես պատասխանդ՝ Erevan 5 Rue Klevian Logement 47 Papa Nian